# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՇՄՆԱԿ-ԴՀ-22/02

ք. Երևան «20» « հունվարի» 2022թ.

**Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեն**, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար **Է. Սեփնյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրենի պաշտոնակատար **Պ. Ցուգունյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), **«Անտառպահպանական ծառայություններ»** ծրագրային միջոցառման՝ բաժին 04, խումբ 02, դաս 02, ծրագիր 1173, միջոցառում 11002 (Անտառային տարածքների պահպանում, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **1 335 485 900 (մեկ միլիարդ երեք հարյուր երեսունհինգ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով: Պայմանագրի գինը ներառում է ԱԱՀ-ի գումարը:

1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի Հավելված №1-ում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

**2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

**2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

**2.3. Պետական մարմինը պարտավոր է՝**

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

**2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.
2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.
2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 23-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.
2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.
2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

## 3. Մոնիթորինգը, Պայմանագրի արդյունքների հանձնման և ընդունման կարգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:
3.6. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև երկկողմ ստորագրված և հաստատված փաստաթղթով՝ հանձնման-ընդունման արձանագրությամբ (Հավելված №4), նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված ժամկետում Կազմակերպությունը իրականացված միջոցառումների հաշվետվության հետ Պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.7. Հանձնման-ընդունման արձանագրությունը Պետական մարմնի կողմից ստորագրվում է, եթե Պայմանագրի արդյունքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-

ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և հաստատվում: Նման դեպքում Պետական մարմինը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.8. Պետական մարմինը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպությանն է ներկայացնում իր կողմից ստորագրված և հաստատված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Պայմանագրի արդյունքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.9. Եթե Պայմանագրի 3.8 կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա Պայմանագրի արդյունքը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.8 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված և հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագրի Հավելված №3-ով հաստատված ժամանակացույցին համապատասխան, տվյալ ամսվան բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության հաշվեհամարին: Ծրագրի գնից 120 193 700 (մեկ հարյուր քսան միլիոն մեկ հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամը Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության հաշվին, որպես կանխավճար՝ պայմանագրի կնքումից հետո 10 օրյա ժամկետում:

4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները՝

ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.

բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է Պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.

գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը, սակայն ոչ ավելի Պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

4.3. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ Կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման և Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները

կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագրով նախատեսված միջոցառումները սահմանված ժամկետում իրականացնելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված իրականացման ենթակա միջոցառումների ժամկետը խախտելու, ինչպես նաև Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում յուրաքանչյուր ուշացված օրվա համար Կազմակերպությունից գանձվում է տույժ՝ իրականացման ենթակա, սակայն չիրականացված միջոցառման գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4. Պետական մարմինը Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարման ենթակա գումարներից:

5.5. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագրի պայմանները տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ քան 2022 թվականի դեկտեմբերի 30-ը:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Ծրագիրը (Հավելված №2) հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Եթե տրամադրվող դրամաշնորհով նախատեսված ծրագիրը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

8.4. Կազմակերպությունը մինչև 2023 թվականի հունվարի 31-ը Պետական մարմնին են ներկայացնում տեղեկատվություն 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ստացված դրամաշնորհի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե մասին» օրենքի 7-րդ հոդվածի

22-րդ մասի պահանջներին համապատասխան չօգտագործված և ՀՀ պետական բյուջե վերադարձված գումարների վերաբերյալ:

8.5. Պայմանագիրը կազմված է 9 (ինը) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Պայմանագրի Հավելվածներ №№1-ը, 2-ը, 3-ը և 4-ը համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտե | «Հայանտառ» ՊՈԱԿ |
| ք. Երևան, Ա. Արմենակյան 129 | ք. Երևան, Ա. Արմենակյան 129 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն |
| Հ/Հ 900011023240 | Հ/Հ 900018002270 |
| ՀՎՀՀ 00476409 | ՀՎՀՀ 02512343 |
| Է. ՍԵԻՆՅԱՆ ______ | Պ.ՅՈՒԳՈՒՆՅԱՆ ______ |
| կ. տ. | կ. տ. |

Հավելված № 1
«___» «հունվարի» 2022թ. կնքված
№ պայմանագրի

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտե գլխավոր քարտուղարի պաշտոնակատար | «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար |
| Է. Մինյան | Պ. Ցուգունյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| NN ը/կ | Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | վերջնա-ժամկետը | պահանջվող գումարը (դրամ) |
| 1 | Անտառպահպանական ծառայություններ | ՀՀ անտառային տարածքների պահպանության աշխատանքների կատարման ապահովում: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների իրականացման համար ֆինանսական աջակցության տրամադրում: | «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրինությանը հանձնված հանրապետության անտառային հողերի տարածքը կազմում է 342,4 հազար հա, որտեղ անտառտնտեսվարում իրականանելու համար գործում են կազմակերպության անտառտնտեսություն մասնաճյուղերը, որոնք բաժանված են անտառապետությունների և պահաբաժինների, որոնց պահպանությունն իրականացնում են անտառապետերը և անտառապահները: Անտառպահպանության աշխատանքներում ներգրավված են անտառտնտեսություն մասնաճյուղերի տնօրենները, ավագ անտառապետերը, տնօրենի պահպանության գծով տեղակալները, անտառպահպանության ինժեներները, անտառկուլտուրաների ինժեներները և այլոք: | Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ունենալ 342,4 հազար հա ապօրինի հատումներից, արածեցումներից, հողազավթումներից, հրդեհներից պահպանված անտառային տարածքներ: Գնահատման չափանիշներն են՝ ապօրինի հատումների և այլ ապօրինությունների արձանագրումը և դրանց շտկումը: | 30.12.2022թ | 1 335 485 900 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | 1 335 485 900 |

Հավելված № 2
«___» «հունվարի» 2022թ. կնքված
№ պայմանագրի

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտե գլխավոր քարտուղարի պաշտոնակատար | «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար |
| **Է. Սեփյան** | **Պ. Ցուգունյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**ՀՀ կառավարության կողմից հաստատված Ծրագիր**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ծրագրի դասիչը՝** | 1173 | **Ցուցանիշներ** | | | |
| **Միջոցառման դասիչը՝** | 11002 | **Առաջին եռամսյակ** | **Առաջին կիսամյակ** | **Ինն ամիս** | **Տարի** |
| Միջոցառման անվանումը՝ | Անտառպահպանական ծառայություններ | | | | |
| Նկարագրությունը՝ | Անտառային տարածքների պահպանում | | | | |
| Միջոցառման տեսակը՝ | Ծառայությունների մատուցում | | | | |
| Միջոցառումն իրականացնողի անվանումը՝ | Մասնագիտացված կազմակերպություններ | | | | |
| **Արդյունքի չափորոշիչներ** | | | | | |
| Կառավարվող անտառային տարածքներ, հազ.հա | | 342.4 | 342.4 | 342.4 | 342.4 |
| Տրամադրված թափուկի ծավալը, պահեստային խմ | | 0 | 10 000 | 30 000 | 60 000 |
| Անտառտնտեսությունների մասնաճյուղերում վերապատրաստման միջոցառումների թիվը, հատ | | 0 | 1 | 3 | 4 |
| Անտառտնտեսությունների մասնաճյուղերում վերապատրաստում անցած անձանց թիվը, շահառու | | 0 | 43 | 68 | 100 |
| Դրամաշնորհային պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման մակարդակը, տոկոս | | 0 | 0 | 0 | 100 |
| **Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)** | | **240 387,5** | **574 258,9** | **908 130,4** | **1 335 485,9** |
| | | | | | |

Հավելված № 3
«___» « հունվարի» 2022թ. կնքված
№ պայմանագրի

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**
ՀՀ շրջակա միջավայրի նախարարության
անտառային կոմիտե գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար
**Է. Մեխյան**
------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
«Հայանտառ» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար
**Պ. Ցուգունյան**
------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտեսական արգման հոդվածը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին՝ աճողական | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առաջին եռամսյակ | | | առաջին կիսամյակ | | | ինն ամիս | | | տարի | | | Ընդամենը |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| Անտառ-պահպանական ծառայություններ | **4637** | 120,193.7 | 240,387.5 | 240,387.5 | 351,678.0 | 462,968.5 | 574,258.9 | 685,549.4 | 796,839.9 | 908,130.4 | 1,050,582.2 | 1,193,034.0 | 1,335,485.9 | 1,335,485.9 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 120,193.7 | 240,387.5 | 240,387.5 | 351,678.0 | 462,968.5 | 574,258.9 | 685,549.4 | 796,839.9 | 908,130.4 | 1,050,582.2 | 1,193,034.0 | 1,335,485.9 | 1,335,485.9 |

Հավելված №
«___» «հունվարի» 2022թ. կնքվա
№ պայմանագր

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**
ՀՀ շրջակա միջավայրի նախարարության
անտառային կոմիտե
ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011020410
ՀՎՀՀ 00476409

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
«Հայանտառ» ՊՈԱԿ

ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900018002270
ՀՎՀՀ 02512343

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____________ » 2022թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կողմից դրամաշնորհի ձևո տրամադրվող ֆինանսական աջակցությա գումարների օգտագործման մասին պայմանագիր***

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «հունվարի» 2022թ.

Պայմանագրի համարը՝

Պետական մարմինը՝ ի դեմս _______________________ և Կազմակերպությունը՝ ի դեմ __________________________, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «___» «__________» 2022 թվականից մինչև «___» » 2022 թվականն ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ միջոցառումները.

| N | Իրականացված միջոցառման | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | քանակական կամ արդյունքային ցուցանիշները | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ |
| | | | ըստ պայմանագրի | փաստացի | |
| | | | | | |
| | | | | | |

ՀԱՆՁՆԵՑ

____________________________
ստորագրություն

____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

ԸՆԴՈՒՆԵՑ

____________________________
ստորագրություն

____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հաստատում եմ
Անտառային պետական կոմիտեի
Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Լ.Ալեքսանյան

«_____» ____________ 2022թ.

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 10

## ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

**01.01.2022թ. - 30.12.2022թ.. ժամանակահատվածի համար**

| | | |
|---|---|---|
| 1. Ծրագրի պատասխանատու մարմնի | Անվանումը՝ | ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտե |
| | Դասիչը՝ | 105050 |
| 2. Միջոցառումը կատարող մարմնի | Անվանումը՝ | ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտե |
| | Դասիչը՝ | 105050 |
| 3.Հիմնարկի անվանումը՝ | | Հայանտառ ՊՈԱԿ |
| 4. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը՝ | | 0011647 |
| 5. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ | | 1 |
| 6. Բյուջետային ծախսերի գործառական | Բաժին N | 04 |
| | Խումբ N | 02 |
| | Դաս N | 02 |
| 7. Ծրագրային դասակարգման | Ծրագրի անվանումը | Անտառների կառավարում |
| | Ծրագրի դասիչ | 1173 |
| | Միջոցառման անվանումը | Անտառպահպանական ծառայություններ |
| | Միջոցառման դասիչ | 11002 |
| 8. Ֆինանսական ցուցանիշների չափման միավորը՝ | | Հազար դրամ |

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները | NN | Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ | Փոփոխություններ տարեկան նախահաշվում: ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում) | ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում) | Վերադասի կողմից | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Վճարման ենթակա սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր): Ընդամենը | Որոնցից 30 օրից անց պարտքեր | Դրամարկղի մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը=Դ+Ե+Զ+Է | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ | | ԺԴ |
| 1100000 | Ընթացիկ ծախսեր | X | 1,335,485.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 1150000 | Դրամաշնորհներ | | 1,335,485.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 1153600 | Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | 1,335,485.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1000000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | X | 1,335,485.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 1,335,485.9 | 0.0 | 0.0 | 0.0 |

Տնօրենի պաշտոնակատար ____________ Ս. Մարկոսյան
(ստորագրություն)

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետի պաշտոնակատար

____________ Ił.Փաշիկյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հաշվապահական հաշվառման բաժնի պետ ____________ Ի. Մարգարյան
(ստորագրություն)

«Հայհեռուստ» ՊՈԱԿ

## ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

առ 30.12.2022թ.

20.01.2022թ. ՆՇՄՆԱԿ-ԴՇ-22/01 պայմանագրի

| N | Միջոցառումների անվանումը | Նախահաշվային գումարը (հազ. դրամ) | Հաշվ. N 01 31.01.2022թ. | Հաշվ. N 02 28.02.2022թ. | Հաշվ. N 03 31.03.2022թ. | Հաշվ. N 04 30.04.2022թ. | Հաշվ. N 05 31.05.2022թ. | Հաշվ. N 06 30.06.2022թ. | Հաշվ. N 07 31.07.2022թ. | Հաշվ. N 08 31.08.2022թ. | Հաշվ. N 09 30.09.2022թ. | Հաշվ. N 10 31.10.2022թ. | Հաշվ. N 11 30.11.2022թ. | Հաշվ. N 12 30.12.2021թ. | Ընդամենը ծախս | Մնացորդը առ 01.12.2022թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *I. Պահպանության (ընթացիկ ծախսեր)* | | | | | | | | | | | | | | | |
| | Աշխատողների աշխատավարձ | **1335485.9** | 111290.4 | 111290.5 | 111290.5 | 111290.5 | 111290.5 | 111290.5 | 111290.5 | 111290.5 | 111290.5 | 111290.5 | 111290.5 | 111290.5 | 1335485.9 | **0.0** |
| | Ընդամենը | **1335485.9** | **111290.4** | **111290.5** | **111290.5** | **111290.5** | **111290.5** | **111290.5** | **111290.5** | **111290.5** | **111290.5** | **111290.5** | **111290.5** | **111290.5** | **1335485.9** | **0.0** |

Տնօրենի պաշտոնակատար ____________ Ս. Մարկոսյան

Հաշվապ. հաշվ. բաժնի պետ ____________ Ի. Մարգարյան

*Հաշվետվություն*

*Ծրագրի ոչ ֆինանսական(արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույց*

*01.01.2022թ. - 30.12.2022թ. ժամանակահատվածի համար*

*Կազմակերպության անվանումը* — *«Հայանտառ» ՊՈԱԿ*

*Ծրագրի անվանումը* — *Անտառների կառավարում*

| հ/հ | Միջոցառման անվանումը | նախատեսվում է իրականացնել 2021թվականին | | | | | | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ըստ եռամսյակների (աճողական) | | | | | | | | |
| | | I - եռամսյակ | | I - կիսամյակ | | ինը ամիս | | տարի | | |
| | | պլանային | փաստաց | պլանայի | փաստացի | պլանային | փաստացի | պլանային | փաստացի | |
| I | II | III | | IV | | V | | VI | | VII |
| 1 | Կառավարվող անտառային տարածքներ (հազար հա) | 342.4 | 342.4 | 342.4 | 342.4 | 342.4 | 342.4 | 342.4 | 342.4 | |
| 2 | Մթերված թափուկի ծավալը, պահեստային խմ | 0 | | 10000 | 10152 | 30000 | 32249 | 60000 | 80093.2 | |
| 3 | Անտառտնտեսությունների մասնաճյուղերում վերապատրաստման միջոցառումների թիվը, հատ | 0 | | 1 | 1 | 3 | 3 | 4 | 4 | |
| | Անտառտնտեսությունների մասնաճյուղերում վերապատրաստում անցած անձանց թիվը | 0 | | 43 | 94 | 68 | 94 | 100 | 178 | |
| 4 | Դրամաշնորհային պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման մակարդակ, տոկոս | 0 | | 0 | | 0 | | 100 | 100 | |

Անտառխախտումների հայտնաբերումների աճը պայմանավորված է անտառպահպանության աշխատողների ավելի հետևողական և բարեխիղճ աշխատանքով:

Տնօրենի պաշտոնակատար ______________ Ս Մարկոսյան

Գլխավոր հաշվապահ ______________ Ի. Մարգարյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը

Անտառների և անտառային հողերի կառավարման վարչության պետի պաշտոնակատար

______________ Գ. Մխիթարյան

(Ա.Հ.Ա.)